ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Աշխեն Շիրվանյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության բաժնի պետ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2018 թվականի օգոստոսի 27-29-ը
4.	Հրավիրող կողմը	Եվրասիական տնտեսական հանձնաժողով
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցություն Եվրասիական տնտեսական միության միասնական տնտեսական տարածքի և Մաքսային միության շրջանակներում անասնաբուժության բնագավառում օգտագործվող դեղամիջոցների շրջանառության նկատմամբ միասնական մոտեցումների ձևավորման համար աշխատանքային խմբի նիստին: Քննարկել՝ - «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական նշանակման ախտորոշիչ, ախտահանիչ, դեզինսեկցիոն, դեզակարիզացիոն միջոցների շրջանառության կանոնակարգման կանոնները հաստատելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծով սահմանվող ԵԱՏՄ մաքսային տարածքում անասնաբուժական նշանակության ախտորոշիչ, դեզինսեկցիոն և դեզակարիզացիոն միջոցների գրանցման սխեմաներին և գրանցմանը վերաբերող ընթացակարգերը, ինչպես նաև անասնաբուժական նշանակության ախտորոշիչ միջոցների գրանցման փաթեթում ներառված փաստաթղթերին վերաբերող հարցերը, - Եվրասիական տնտեսական միության սանիտարական, ֆիտոսանիտարական և անասնաբուժական միջոցների դեպարտամենտի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ՝ ԵԱՏՄ-ի մաքսային տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության կանոնակարգմանը վերաբերող հարցերը:

6.	Քննարկված թեմաները	Նիստի ընթացքում քննարկվել են՝ - «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական նշանակման ախտորոշիչ, ախտահանիչ, դեզինսեկցիոն, դեզակարիզացիոն միջոցների շրջանառության կանոնակարգման կանոնները հաստատելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագիծը, ԵԱՏՄ մաքսային տարածքում անասնաբուժական նշանակության ախտորոշիչ, դեզինսեկցիոն և դեզակարիզացիոն միջոցների գրանցման սխեմաներին և գրանցմանը վերաբերող այլ ընթացակարգերը, ինչպես նաև անասնաբուժական նշանակության ախտորոշիչ միջոցների գրանցման փաթեթում ներառված փաստաթղթերին վերաբերող հարցերը, - Եվրասիական տնտեսական միության սանիտարական, ֆիտոսանիտարական և անասնաբուժական միջոցների դեպարտամենտի, Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և ֆիտոսանիտարական հսկողության դաշնային ծառայության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ՝ ԵԱՏՄ-ի մաքսային տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության կանոնակարգմանը վերաբերող հարցերը:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Կայացել են հանդիպումներ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցառումների դեպարտամենտի, Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և ֆիտոսանիտարական հսկողության դաշնային ծառայության մասնագետների և ԵԱՏՄ անդամ-պետությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են՝ -«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական նշանակման ախտորոշիչ, ախտահանիչ, դեզինսեկցիոն, դեզակարիզացիոն միջոցների շրջանառության կանոնակարգման կանոնները հաստատելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծով սահմանվող ԵԱՏՄ մաքսային տարածքում անասնաբուժական նշանակության

		ախտորոշիչ, դեզինսեկցիոն և դեզակարիզացիոն միջոցների գրանցման սխեմաներին և գրանցմանը վերաբերող ընթացակարգերը, ինչպես նաև անասնաբուժական նշանակության ախտորոշիչ միջոցների գրանցման փաթեթում ներառված փաստաթղթերին վերաբերող հարցերը, - ԵԱՏՄ անդամ-պետություններում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության ներկայիս գործընթացը և համապատասխանեցումը շրջանառության մեջ գտնվող «ԵԱՏՄ-ի մաքսային տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության կանոնակարգման» վերաբերյալ Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի նախագծով նախատեսվող պահանջներին, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների Ռուսաստանի Դաշնության տարածքում շրջանառության նկատմամբ գործող և նախատեսվող սահմանափակումները:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածություններ, ստորագրված փաստաթղթերը	Քննարկման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն հանել շրջանառությունից «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների շրջանառությունը կսահմանափակվի բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում, որը նախկինում պահանջվել էր Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և ֆիտոսանիտարական հսկողության դաշնային ծառայության կողմից, միաժամանակ Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման ժամանակ ըստ անհրաժեշտության ներգրավել համապատասխան մասնագետների, ինչպես նաև գրանցման ժամանակ պահանջվող որոշ լաբորատոր փորձաքննությունների իրականացման անհնարինության դեպքում, դրանք իրականացնել այլ համապատասխան լաբորատոր հաստատությունում:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները,	Հանել շրջանառությունից «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության

	պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների շրջանառությունը կսահմանափակվի բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում: Միաժամանակ, ներկայումս իրականացվում են միջոցառումներ Հայաստանի Հանրապետության տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման ժամանակ անհրաժեշտ լաբորատոր և թղթային փորձաքննությունների պատշաճ և լիարժեք իրականացման գործընթացի ապահովման նպատակով:
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության բաժնի պետ Աշխեն Շիրվանյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	24. 09. 2018թ.